

Հարկահանին ցանկն է, որ կախուկերու է սրճարանի պատին: Վաղը առտու կանուխ գիւղ կը հասնի ինքը ու այս պատրաստութեան միջոցն ալ կը յայտարարէ իր կողմէ կատարուած: Իր ընթերցումը, անոր հաղորդումը գիւղապետին քանի մը անգամ կ'ընդմիջուին նոյն բացագանչութիւններով՝

- Խրիմեա՛ն, Խրիմեա՛ն...

Վստահաբար գիտեմ, որ շատ քիչեր, հագիւ քանի մը նոր տղայ կը ճանչնան այդ անունին տակ հայոց դժբախտ կաթողիկոսը: Բայց բառը ընտանի է փերեզակի մը վրայով, որ ամէն տարի, կալվրայ կու գայ գեղ, կը փռէ բանուկ ճամբաներու, փռառաջներու, կալելու հարթավայրին իր ապրանքները հելալ, ձիւթ, խունկ, մոմ, գաւաթ, պնակ, պատառաքաղ, մա՛նաւանդ պտտիկ զմեկներ, տղոց խորունկ հետաքրքրութիւնը, ախորժակները յուզող եւ կը կրէ պատկառելի անունը, շունչանորդիի մը կողմէ փակցուած: Կնքահայրը նոր այդ անունը ճարած է, մեկնելով անոր նոյնքան վեհափառ քիթէն, որ Մկրտիչ Խրիմեանի դէմքին վրայ կը բազմի այնքան իրաւ վեհափառութեամբ մը: Բայց կայ աւելին: Այս փերեզակը ունի ձայներուն ամէնէն սրտայոյզը, իր ապրանքներուն կեդրոնը կոկոզած, սանտրերը տեղաւորելով երբ կ'ոլորէ բոլորին սիրտը տակնուվրայ բերող եղանակը.

...Հրաժարական քարոզ տուիր,  
Մեր սիրտերուն մէջ, Հայրիկ ցան,  
Կրակ վառեցիր...

Ու հեքիաթը: Կը ձգեմ զայն: Բաւ է ինծի ըսել հոս, որ շրջապատող ամբոխին համար այդ բառը հաւանաբար անունն է Քաջ Վարդանի թոռան կամ հայոց աշխարհի հին մէկ արքային: Մեր ազգային գիտակցութեան պատմական երեսը նոր է անշուշտ: Դարեր ու դարեր այդ գիտակցութիւնը պահպանուած է մեր աղօթքներով ու նման քանի մը բառերու յուռութքովը: